

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ջրադրվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2005թ. հունվար-հուլիսին, ըստ գնահատման, կազմել է 1212.6 հազ. մարդ, որի 91.5%-ը կամ 1109.8 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 8.5%-ը կամ 102.8 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2005թ. հուլիսի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 126.5 հազ. աշխատանք փնտրողներից 93.4%-ը կամ 118.2 հազ. մարդ եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 79.9%-ը կամ 94.5 հազ. մարդ:

Աշխատուժի առաջարկն ըստ ամիսների 2005թ.¹

(ամսվա վերջի դրությամբ)

| | Աշխատանք փնտրողների թվաքանակը | | նրանցից՝ չզբաղվածներ | | նրանցից՝ գործազուրկներ | |
|---------|-------------------------------|--------------------|----------------------|--------------------|------------------------|--------------------|
| | ընդամենը, հազ. մարդ | 2004թ. նկատմամբ, % | ընդամենը, հազ. մարդ | 2004թ. նկատմամբ, % | ընդամենը, հազ. մարդ | 2004թ. նկատմամբ, % |
| հունվար | 139.8 | 94.3 | 135.7 | 92.4 | 106.7 | 90.3 |
| փետրվար | 138.9 | 93.0 | 134.9 | 91.1 | 106.3 | 89.6 |
| մարտ | 138.3 | 92.4 | 106.0 | 74.5 | 89.6 | 97.8 |
| ապրիլ | 135.8 | 91.1 | 130.9 | 88.8 | 103.2 | 88.0 |
| մայիս | 132.7 | 89.7 | 126.4 | 86.5 | 98.6 | 85.0 |
| հունիս | 130.0 | 87.8 | 122.0 | 83.8 | 97.0 | 84.3 |
| հուլիս | 126.5 | 85.3 | 118.2 | 81.5 | 94.5 | 82.7 |

Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 4.4 հազ. մարդ, նրանցից՝ կանայք՝ 54.5%:

2005թ. հուլիս ամսին վերոնշյալ գործակալությունում գրանցված 1.3 հազ. չզբաղվածներից 0.9 հազարը կամ 69.3%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից դուրս են եկել 5.1 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.6 հազարը կամ 11.8%-ը՝ աշխատանքի տեղավորման կապակցությամբ:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2005թ. հուլիսին¹

(ամսվա վերջի դրությամբ)


| | Աշխատանք փնտրողների թվաքանակը | | նրանցից՝ չզբաղվածներ | | նրանցից՝ գործազուրկներ | |
|--------------------|-------------------------------|----------------------------|----------------------|----------------------------|------------------------|----------------------------|
| | ընդամենը, հազ. մարդ | 2004թ. հուլիսի նկատմամբ, % | ընդամենը, հազ. մարդ | 2004թ. հուլիսի նկատմամբ, % | ընդամենը, հազ. մարդ | 2004թ. հուլիսի նկատմամբ, % |
| ք.երևան | 28.4 | 89.3 | 28.1 | 88.9 | 24.6 | 89.1 |
| Արագածոտն | 2.8 | 112.0 | 1.9 | 90.5 | 1.3 | 92.9 |
| Արարատ | 4.9 | 90.7 | 4.2 | 80.8 | 3.2 | 82.1 |
| Արմավիր | 5.9 | 71.1 | 5.5 | 67.1 | 3.6 | 67.9 |
| Գեղարքունիք | 8.1 | 94.2 | 7.2 | 87.8 | 4.8 | 87.3 |
| Լոռի | 26.9 | 96.4 | 26.1 | 94.9 | 20.7 | 94.5 |
| Կոտայք | 7.3 | 93.6 | 6.8 | 89.5 | 5.1 | 94.4 |
| Շիրակ | 21.3 | 67.2 | 19.8 | 63.7 | 16.2 | 65.1 |
| Սյունիք | 13.1 | 80.4 | 12.1 | 75.2 | 10.2 | 77.9 |
| Վայոց ձոր | 2.3 | 95.8 | 1.8 | 78.3 | 1.4 | 82.4 |
| Տավուշ | 5.5 | 98.2 | 4.7 | 90.4 | 3.4 | 97.1 |
| Ընդամենը ՀՀ | 126.5 | 85.3 | 118.2 | 81.5 | 94.5 | 82.7 |

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

2005թ. հուլիսի վերջի դրությամբ պաշտոնապես գրանցված գործազուրկների 70.4%-ը (66.5 հազ. մարդ) կազմել են կանայք: Կանանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2004թ. հուլիսի նկատմամբ աճել է 0.7%-ով:

Աշխատուժի նկատմամբ պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2005թ. հուլիսի վերջի դրությամբ կազմել է 1137 մարդ, այդ թվում՝ 72.9%-ը կամ 829-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

Ըստ մասնագիտությունների աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը



Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների 2005թ. հուլիսին¹

| Մասնագիտությունների անվանումը | Ընդամենը | որից՝ ամսվա վերջի դրությամբ |
|---------------------------------------|-------------|-----------------------------|
| Ազատ աշխատատեղեր | 1395 | 1137 |
| Ծառայողներ, ընդամենը | 349 | 308 |
| <i>Նրանցից՝</i> | | |
| տնտեսագետ | 5 | 1 |
| ինժեներ | 15 | 9 |
| բժիշկ | 187 | 182 |
| մանկավարժ | 42 | 41 |
| իրավաբան | - | - |
| գյուղատնտես | - | - |
| այլ մասնագետներ | 100 | 75 |
| Բանվորներ, ընդամենը | 1046 | 829 |
| <i>Նրանցից՝</i> | | |
| խառատ | 23 | 13 |
| փականագործ | 21 | 14 |
| մեխանիկ | 12 | 10 |
| էլեկտրիկ | 11 | 8 |
| ատաղձագործ | 4 | 4 |
| վարորդ | 43 | 35 |
| եռակցող | 20 | 16 |
| կոշկագործ | - | - |
| կարող, մանող, գործող, ջուլիակ | 165 | 151 |
| բանվորական այլ մասնագիտություններ | 375 | 274 |
| մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր | 372 | 304 |

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների¹, 2005թ.

(ամսվա վերջի դրությամբ)

| | Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ | Զգբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով | |
|---------|---|---|-----------------------------------|
| | | մարդ | % |
| | | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ |
| Հունվար | 956 | 142 | 63.7 |
| Փետրվար | 1058 | 127 | 89.4 |
| Մարտ | 1011 | 133 | 104.7 |
| Ապրիլ | 1118 | 117 | 88.0 |
| Մայիս | 905 | 140 | 119.7 |
| Հունիս | 1012 | 121 | 86.4 |
| Հուլիս | 1137 | 104 | 86.0 |

Գործազրկության նպաստի միջին չափն ըստ ամիսների¹


(ամսվա վերջի դրությամբ)

| | Նպաստառու գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ | | Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ | |
|---------|---|------|--|------|
| | 2004 | 2005 | 2004 | 2005 |
| Հունվար | 5.4 | 3.5 | 3503 | 6363 |
| Փետրվար | 5.9 | 4.1 | 3154 | 6438 |
| Մարտ | 6.2 | 4.9 | 3267 | 6696 |
| Ապրիլ | 6.2 | 5.7 | 3236 | 6349 |
| Մայիս | 6.1 | 6.0 | 3274 | 6481 |
| Հունիս | 5.9 | 6.3 | 3351 | 6574 |
| Հուլիս | 5.7 | 6.4 | 3479 | 6485 |

Պաշտոնական գործազրկության մակարդակն ըստ ամիսների¹

(ամսվա միջինը, գնահատական, %)

| | 2004 | 2005 |
|---------|------|------|
| Հունվար | 9.8 | 9.0 |
| Փետրվար | 9.8 | 8.9 |
| Մարտ | 9.8 | 8.9 |
| Ապրիլ | 9.5 | 8.5 |
| Մայիս | 9.3 | 8.2 |
| Հունիս | 9.3 | 8.0 |
| Հուլիս | 9.2 | 7.8 |



¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով: